

## Ա Ջ Ա Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Տետրակներուն դպրոցիս  
Դրասեղանին, ծառերուն  
Աւազին վրայ և ձիւնին  
Քու անունդ գրեցի:

Գրուած բոլոր էջերուն  
Բոլոր ներմակ թուղթերուն  
Քարին, արեան, մոխրին վրայ  
Քու անունդ գրեցի:

Պատկերներուն ոսկեգօծ,  
Ռազմիկներու զէնքերուն  
Թագաւորի թագին վրայ  
Քու անունդ գրեցի:

Անապատին, անտառին,  
Ծաղիկներուն, բոյնին վրայ,  
Արծազանգին մանկութեանս,  
Քու անունդ գրեցի:

Գիշերներու հնայքին  
Օրուան ներմակ հացին վրայ,  
Եւ հարսնացեալ գարունին  
Քու անունդ գրեցի:

Բոլոր լագուարթ լաթերուն,  
Մամրոտ փայլով ջուրերուն,  
Եւ լնակին՝ ողջ լուսին,  
Քու անունդ գրեցի:

Հորիզոնին, դաշտերուն,  
Թռչուններու թևերուն,  
Ազօրիքի շուքին վրայ,  
Քու անունդ գրեցի:

Արշալոյսի շողերուն  
Ծովուն վրայ, նաւերուն,  
Սէգ լեռներու գագաթին  
Քու անունդ գրեցի:

Փրփուրին վրայ ամպերուն  
Փոքորիկի երկունքին  
Եւ անձրևի յորդահոս  
Քու անունդ գրեցի:

Լուսանաճաճ ձկներուն  
Զանգակներու գոյներուն,  
Թանձր ու կարծր նիւթին վրայ  
Քու անունդ գրեցի:

Արահետին սպասող  
Համբաներուն տարածուն,  
Անձայրածիր վայրերուն  
Քու անունդ գրեցի:

Վրան նրագին մշտավառ  
Եւ առկայծող իր լոյսին,  
Դրկից բոլոր տուներուն  
Քու անունդ գրեցի:

Միրգին վրայ նոր կիսուած,  
Հայելիին, սենեակիս՝  
Մահիս վրայ, սին խեցի,  
Քու անունդ գրեցի:

Շունիս անկուշտ և քնուշ,  
Ականջներուն վրայ ցցուած  
Եւ ձախաւեր իր քաթին  
Քու անունդ գրեցի:

Սեմին վրայ իմ դրան  
 Եւ ընտանի իրերուն  
 Օրհնուած կրակի բոցին վրայ  
 Քու անունդ գրեցի:

Բոլոր մարդոց վրայ մորթին  
 Ճակտին վրայ բարեկամին  
 Ինձ երկարուած ձեռքերուն,  
 Քու անունդ գրեցի:

Ցուցափեղկին վաճառքի,  
 Շրթներուն վրայ ուշադիր,  
 Նոյնիսկ վրան լուսքեան  
 Քու անունդ գրեցի:

Խրնիքներուս աւերակ  
 Փարոսներուս խորտակուած  
 Եւ ձանձրոյթիս պատին վրայ  
 Քու անունդ գրեցի:

Բացակային անփափաք  
 Մենութեանս վրայ մերկ  
 Եւ քայլերուս վրայ մահուան  
 Քու անունդ գրեցի:

Առողջութեանս ետ եկած,  
 Անհետացած վտանգին,  
 Անյիշատակ յոյսին վրայ  
 Քու անունդ գրեցի:

Միակ բառի մը ուժով  
 Կեանքս նորէն կ'սկսիմ  
 Ծնած եմ քեզ նանչնալու  
 Քեզ կոչելու

Ա.ՉԱ.ՏՈՒԹԻՒՆ:

PAUL ELOUARD

Թրգմ. Ս. Ա. Մ.